

ՆԱՐԵԿԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏՐ ԵՒ ԱՆՈՐ ԱԿՈՒՆՔԸ

(Շար. տեղ. Բազմալեզու 1951, թիվ 7-8 էջ 156)

Գ. - ՄԵՂՔԻՆ ՈՒ ԱՆՈՐ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Նարեկացիին հոգեկան կառույցը թույլ չէ տուած որ մեղքին իմաստին կառչի, ան իր երկարաշունչ մատենին մէջ երբեք չէ ըսած թէ ինչ է մեղքը, չէ փորձած «մա-կարդին» բազաղութիւնը բնորոշել:

Ի՞նչ է պատճառը այս անտեսումին: Նարեկացիին համար զոյւթիւն ունի մեղաւորն ու անոր հոգեբանութիւնը, իսկ մարդս վարկաբեկող արատը՝ մեղքը, ան-սրբութիւնը եւ անսահմանելի է:

Առ հասարակ մարդս տկար է պատշաճ կերպով իր մտածումներուն եւ զգացում-ներուն էութիւնն ու սահմանները ճշդել, մեղքի պարագային՝ կնճռոտութիւնը իր զազաթնակէտին կը հասնի:

Մարդիկ ի զուր ճղնած են բանականու-թեան եւ հաւաքական կեանքի օրէնադրու-թեան կազապարններուն մէջ ձեւակերպել՝ մեղքին, յանցանքին, անբարոյականու-թեան եւ ոճիրին բնոյթը:

Մեղիկէն աւելի յարաւորութիւն ու ան-պարկասկելի է այդ զոյալիճակներուն էութիւնը: Բարին ու չարը, պարտակա-նութիւնն ու պարտադանցութիւնը, չափա-զիտական օրէնքներու ենթակայ չեն, ո՛չ խօսքով եւ ոչ ալ զբաւոր կերպով կարելի է զանոնք բանաձեւել:

Բայց կա՛յ մեղքը, մենք կը զգանք անոր զոյութիւնը՝ մեր սրտին զարկերուն թըր-թոսցումներուն մէջէն, մեր խղճի խայ-թին յարուցած տառապանքներուն պէս-պիտի երանդաւորումներուն բովէն, ու կը զգանք ոչ միայն անոր զոյութիւնը, ալ նաեւ աստիճանաւորումներն ու ճիւղաւո-րումները:

Կը բաւէ Նարեկացիին հետեւեալ հատ-ուածը կարդալ, զազաւար մը կազմելու համար մեղքին ալլապանութեանը եւ տա-րուցութեանը մասին:

Ծովափին վրայ համահաւաքուած մանրախիները խիստ շատ են քիւով, Բայց տարանջատ են անոնք իրարմէ, որ ո՛չ կը ծընին եւ ո՛չ ալ կ'անին: Իսկ յանցանքներու, մեղքերու համարն՝ ոչ իսկ հնար է երեւակայել: Մէկն իր քիծերով, եւ ուրիշ մը իր շառախղներով: Մէկն իր քիծերով եւ միւս մըն ալ իր արկածներով: Մէկն իր կազմութեամբ եւ ուրիշ մըն ալ իր պըտուղներով: Մէկն իր մասերով, միւսն ալ իր ճիւղերով: Մէկն իր ոստերով, միւսն իր ջովերով: Մէկն իր ցանկերով, միւսն իր մատներով: Մէկն իր խիբրտներով, միւսն իր ոյծերով: Մէկն իր ազդմունքով, միւսն իր նշաններով:

Մէկն իր տիպերով, միւսն իր մնացորդով: Մէկն իր ստուերներով, ուրիշ մ'ալ իր մթութիւններով: Այս մէկն իր յարձակումներով, եւ այն միւսն ալ իր հընարքներով:

Այս յանկերգով տակաւին ամբողջ էջ մը թուումը ընելէ ետք՝ Նարեկացին կ'եզրա-վեցնելով, մեղքին զանազան տեսակներուն փակէ:

Ասոնք են ահա համայն հոգիները ապականող գլխաւոր մեղքերն, իրեն ստորադաս բոլոր մասերով՝ որոնցմէ նոյնպէս իւրաքանչիւրն ալ Բաղկացած է հազարաւորներէ, բիւրաւորներէ: Իսկ ամբողջական քիւն անոնց այն միայն կարող է գիտնալ՝ Որ մեր կողմէ անգոյ նկատումներն իբրեւ գոյ եղող գործեր կը տեսնէ: — Բան Զ —

Նարեկացին այս հատուածին մէջ կը դը-ծէ մեղքին աղագհամարը, կը կանգնէ ա-նոր ծառը, իր բաղաձայնաւոր եւ բազմա-ճիւղ զանդուածային տեսլքովը, խուսա-փելով սակայն բազաղելի մասերուն անու-նը տալ:

Ինչպէս որ կանխաւ առիթը ունեցանք եքէ բուրբը ծովուն մելանի փոխեմ, եւ ընդարձակ դաշտերն անսահման՝ Լայնատարած քուղքի վերածեմ, եղեգնաշամբի անհամար ու խիտ անտառներն ալ ողջ կտրեմ, ու գրիչներ շինեմ անոնցմով, — Ոչ իսկ մասը բարդուած անօրէն այդ արարքներուն՝ Կրնամ սահմանել ու գրի առնել: Եւ քէ մայրիները Լիբանանի՝ կշոյ լըծակի մէկ ծայրը կապեմ, Նըծարի քեքեւ քաքին մէջ դնեմ լեռն արարատեան, — Անոնք երբեք, երբեք իմ մեղքերուս հետ պիտի չկրնամ գուգահաւասարիլ: — — Բան Թ —

Հոս ալ մեղքը պատկերացուած է իր լեռնանման զանդուածովն ու կշիռովը, բայց չկայ անուն մ'իսկ որ մեղքին էութիւնը բնորոշէ: Նարեկացիին այս վերաբերմունքը բնա-կան է եւ տրամաբանական. բարոյականի տէր մարդուն համար, մեղքը անուն մը չի կրնար կրել, ան՝ հրաւառ ծփանք մըն է, որ զալարուելով մարդուս էութեանը մէջ, կը բռնկեցնէ անոր ներաշխարհը, կը ցնցէ ու կը կիզէ անոր մարմինը կազմող իւրա-քանչիւր բջիջը: Ինչպէս որ բնութեան ծոցին մէջ դո-յութիւն ունին զիւրավառ նիւթեր եւ կը-րակէն անխոցելիներ, նոյնպէս ալ մարդ-կային զանդուածին մէջ գոյութիւն ունին զիւրաբարբէր հոգիներ եւ քարացած խիղ-ճեր:

Մեղքը՝ ոմանց խիղճը կը բռնկեցնէ, իսկ ուրիշներունը՝ հաղիւ թէ կը տաքցնէ։ Արդ, այս պայմաններուն մէջ, ի՞նչպէս կարելի է անուն մը տալ մեղքին, երբ իւրաքանչիւր անհատի սրտին դարկին երկունքովն է որ կը ծնի ան ու կը ձեւակերպուի անոր էութիւնը։

Նարեկացիին համար, մեղքը անանուն ու անհուն տարածութիւն մըն է, որ ծովերը, դաշտերը, անտառները եւ լեռները կը գրաւէ։

Տոքթ. Ալպէս Շուայցերի համար ալ մեղքին սահմանները չափազանց ընդարձակ են, մեղք կը նկատէ՝ մինչեւ իսկ սառի կտոր մը փշրելը, տերեւ մը կամ ծաղիկ մը փրցնելը, եւ ոճիր՝ կենդանութեան ամենայն տիպի հիւլէին դաշխելը։

Որով, կարելի է ըսել, թէ մեղքի դաժապարը անհատական զգալակերպի ծընունդ է, ու անոր դոյութիւնը կը բնորոշուի «նատար»ով մը, զոր խղճի խայթ կը կոչենք։ Անիկա ոմանց քով չափազանց զգայուն է, ուրիշներու քով տկար, իսկ ոմանց քով ալ բոլորովին անզոյ։

Հոգեկան բարձունքներ նուաճելու համար, խղճի զգայուն «նատար» մ'ունենալը չի բաւեր, պէտք է նաեւ փրկութեան ճամբան գտնելու համար դայն լաւագոյն կերպով օգտագործել զխոնալ։

Նարեկացիին շատ արդարօրէն դիտել կու տայ, թէ խղճի խայթը ինքնին չինիչ ոյժ մը չէ, ընդհակառակն՝ «խոցոտող» եւ սպառիչ է։

Ահազանդ մըն է՝ մեղքը իր յղացման պահուն իսկ յայտնաբերող, որպէսզի անոր յարուցած ժխորն ու խռովքը անդորրութեան եւ խաղաղութեան յանդի, պէտք է որ անմիջապէս զղջման փրկարար դըռները լայնօրէն բացուին, մեղաւորին քայլերը հոն ուղղուին, ու անոր աւագանին մէջ մեղքին կեղտը մաքրուի եւ վերելք մը կերտուի։

Նարեկացիին զղջումի զգացումը «մեղայ»ին մէջ խտացնելով, ճարտարօրէն կը լուսաբանէ անոր խորհուրդին միութիւնը, ու հեւք տալով հոգեկան իր բարձրապայծառ թռիչքին, զմայլելի թաւալութեամբ կը մենեղէ։

Ահա՛, արդարեւ, խօսքի այս կերտումովն՝ «Մեղայ»ն՝ օրհնեալ է եւ յուսադրական՝ սրտերու համար։ Նոյն ինքն աւանդ մըն է պատուական Անմոռաց պատուէր, հայրենական տուրք, Նախահարց օրէնք, պաշար հանրական, Անհերքելի խօսք, գորեզ պատասխան, Կամուրջ դէպ ի կեանք, հանելի վերինին, սիրելի սրբոց, Անխրդելի կապ, անժխտելի փաստ, հրաշալի բարբառ, Բազմալի աղերս, ըզգալի սեղան, սրտաբեկ հնչում, անհատներուն մար, Կարծրութեան վանիչ, կարգ ու սահման աստուածապաշտներու, Հեքանոսաց գիրք, վաղեմի կանոն, Հարազատ՝ քրիստոնեաներուն եւ յաղթող՝ արարչութեան իսկ, Հրգօր անջրբայտ, ահաւոր խտրոց, Բարձրագոյն արուեստ, անչափ խորութիւն, Հիանալի տեսիլ, կնքւած խորհուրդ՝ որուն եւ ոչ ոք կրնայ քափանցել, Արագաքընիչ միտքն իսկ ըլլալով անընդունակ գայն ըմբռնելու։

— Բան ի՛նչ —

1951

Այո՛, «մեղայ»ն օրհնեալ է եւ յուսադրական սրտերուն համար, եւ իսկական կամուրջ մըն է դէպի նոր կեանք առաջնորդող, նոր արշալոյսներու, նոր առաքինութիւններու թանկագին գրաւական մը։

Կամովին յանձն առնուած ինքնասրբադրութիւն է, տեսակ մը յարուցում, հիմնովին տարբեր ընկերային կարգ ու սարքին մէջ կիրարկուած պատիժէն, որ երբեք չ'անդորրացներ հողին, չ'աղնուացներ մարդոյ, այլ աստիճան մ'աւելի կ'ալլասէրէ, աւելի ամբարտաւան կը դարձնէ ու ըմբոստութեան կը մղէ։

Զղջումը ախտն է Նարեկացիին ջատագոված բարոյականութեան, անոր սուրբ խորհուրդովն է, որ առանձնաշնորհաւ անհատներ կը մաքրուին մեղքէն, կը բերեղացնեն իրենց հոգեկան արժանիքները ու կը սրբանան։

Սայթաքումը՝ մարդկային է, կարեւորը՝ մեղքին արահետներէն անցնելով հանդերձ՝ գլուխը բարձր բռնելով, բարուութեան եւ ճշմարտութեան իտէալներովը առաջնորդուին է։

Նարեկացիին հոգւոյն պայծառ երկնքին վրայ բարութեան աստղն է որ կը պլպլայ։ Այդ աստղը, Արարատին գաղաթը փայլտըկող հայութեան հաւատքին, յոյսին եւ սիրոյն կանթեղն է։

Ան ա՛յնքան փայլուն ու գեղեցիկ է, որ մինչեւ այսօր իսկ կը մնայ անչէջ. ա՛յնքան գրաւիչ է, որ մէկ ահնարկով իսկ, հայը կրնայ դայն մատնանշել եւ հպարտօրէն բացադանշել։

Երկնի անթիւ աստղերէն մերն է միայն անիկա... Ամէն գիշեր, վերը, հո՛ն՝ Արագածի գլխուն վրայ, Ան կը շողայ առանձին, այնքան անջատ միւսներէն՝ Որ ուրիշ՝ ձեռք մը կարծես գանի վառեց գաղտնօրէն... (Վ. ԹէֆէնԱն)

Տոքթ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

(Շարունակելի)

ՄԱՆՈՒՅ. - Տոքթ. Պ. Միսաքեանի յօդուածին նախընթաց հրատարակութիւններուն մէջ տպագրական սխալներ սպրդած ըլլալուն, հոս կու տանք անոնց սրբագրութիւնը։

Թիւ Բազմավէպի	Էջ	Սխալ	Սխալը, վերին	Ճշգրտում	
				Բազմաստեղծ	Բազմաստեղծ
5-6	120	Բ.	18	Այդ աստուած կոչեցեալը	Այդ աստուած կոչեցեալը
5-6	121	Ա.	5	Բազմաբան	Բազմաբան
7-8	156	Ա.	26	Աստուածութեան	Աստուածութեան
7-8	157	Բ.	35	վայրկեանին	վայրկեանին
7-8	159	Բ.	9		

